

առաջին փլանի: Այն ատեն ալ, այսինքն՝ Տարօնի «դաշտում», ինչպէս այծարած Ակոյի «քարայրում», պարզ ու մէկ էր եղած իր նպատակը.- ՃԱՆՉՆԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐ-ԴԸ: Դժուար, դժնդակ գիտութիւնը, զոր կը սորվին իրեն նման, հողին ու ցեխին մէջ պառկելով, ոչ թէ գրասենեակներու հեշտ «մթնոլորտում»: Իր անիծակուռ զայրո՛յթը՝ բոլոր անոնց դէմ, որոնք թերթերէն կամ գիրքերէն կը բաւարարուին, մեր ժողովուրդը ճանչնալու հարցովը:

Յեղափոխականը բանաստեղծ մը չէ, որպէսզի Վենետիկի Ս. Ղազարէն պատգամներ արձակէ ժողովուրդին պէտքերուն: Յեղափոխականը ժընեւի տարրաբանական աշխատանոցներուն մէջ գիտական փորձեր կատարող ուսանողն ալ չէ: Կարի՛քը՝ թափանցումն է ժողովուրդին: Կայ կէտ մը, ուր մեր ամենաբարձր մտաւորականը ու խորագոյն գեղջուկը գիրար կը հասկնան: Այդ կէտին վրայ եղբայրութիւնը միտքին ու զանգուած-ուժին: Թուրքին դանակէն առաջ, ճանչնալ այդ կէտը: Ա՛յս էր ձգտումը ընկեր Մաթիկին: Իր ընդվզումը, իր հերձուածը արդիւնքն էր այդ փափաքին: Չըսաւ, թէ հասած էր իր նպատակին: Չըսաւ, թէ ի՞նչ էր իր եղանակը, «մեթոտը»՝ իր անձնական այնքան առատ դիտողութիւնները, ջիղերուն անփոխարինելի փորձառութիւնները «յօգուտ» մեր ժողովուրդին զոհագործելու: Ու տպաւորիչ էր չհաւատալ իր ազատուելուն, սա առաքելութենէն, թէեւ երբեմն-երբեմն լսելի ըլլային սպառնալիքներ, իր բերնէն, ժընեւ կամ Մոսկուա քաշուելով, մեծ հերետիկոսներ հարուածելու: Թերեւս մահը, շուքին նման՝ ինչպէս կ'ըսեն իրեն հետեւող, առած էր մէջէն յոյսին երկինքը, անոր զգայարանքը, զինքը վարժեցնելով հեռահայեաց այն այլուրութեան, որ մահապարտինն է ընդմէջ իր արարքին ու անոր քաւութեան: Տեսակ մը մահապատրաստութիւն: Այդ զգայարանքն է, որ կը յօրինէ մարգարէները, նահատակները, մեծ գործելու մռայլ, մոլեռանդ գործաւորները, այնքան պզտիկ իրենց պարագրկել ուզած ձեռնարկէն, երբ լծուած են այդ աշխատանքին: